

ԱՄԱՆՈՒ ԿՐԻՍՏՈՍԻՆՈՒՆ

Պուշկարիոյ համար
 Կարգաւոր 12 թր.
 Վերջնական 6
 Ա. աստիճանի 15
 Տարեկան 8
 Վերջնական համար 3
 Վերջնական 1.50
 ԿԱՆՏՈՆԻ ԿԱՆՏՈՆԻ

Մանուգրեւմ սուրբ սուս-
 ծիկ երեսն համար 40 ս.
 Վերջնական համար 20
 սուսիւմ է. երեք հե-
 սանի սակարկեալ համար
 20 թր. զեղը կրչայ :

Վառնայի համար ձեռքի 10 սակարկել

ՇԱՐՔՈՒՆ

Նախկին Կրիստոսիոսի
 համար Կարգաւոր 12 թր.

Редакция вѣстника
 Панжумъ
 Варна
 Редакция du journal
 "Charjoun"
 Varna (Bulgarie)

Կարգաւոր 12 թր.

Վերջնական ձեռքի

(20 ՍԱՆԹԻՄ)

Պուշկարիոյ համար ձեռքի

≈ 15 ՍԱՆԹԻՄ ≈

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՔՈՒՆ ՕՐՈՒՐԸ

ՇԱՐՔՈՒՆԻ ՆՈՐ ԲԱՏԱՆՈՐԳԻ ԳՐՈՒՈՂԸ ԲԱՏԱՆԳԻՆԵՐ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆՏՈՆԻ ՎՃԱՐԻ

ԲԱՑ ՆԱՍԱԿ

ՎԱՏԻԼԻ ԹՈՒՍԱՅԵԱՆԻՆ ԵՒ ՀԱՅ ՀԱՍԱՐԱՆՈՒԹԵԱՆ

«Բերապայծառ» պատուելի, ձեր
 ղիկնազօրի հրաւերը իմ խելովում
 սպառնալուց յետոյ, ամեն ճիգ պէտք
 է թափեմ ձեզ հետ քաղաքավար
 կերպով խօսելու !!!
 Անշուշտ, Ա. Եսաւարանապաշտ պատ-
 տելի, դուք կարգաւոր, «Շարժում»-ի
 մէջ ձեր մասին Լօնտօնից գրված քն-
 նադատական նամակները «Պատանի»-ի
 հրատարակութեան առթիւ :

Բայց Բրիտանացիներու պատուե-
 լի, երկի, ժընկվից ընդունելիք
 Լօնտօնից ձեր մասին գրված մի նա-
 մակի պատճէնը, որի մէջ դուք ներ-
 կացվում էք, իբրեւ մի սկզբնաւոր
 շահաւոր, որբերը շահագործող,
 զուրկ ու է պաշտօնական ձգտում-
 ներից մարդ ու ամենաճարակի որսորդ
 աւետարանական հօսք սուտարացիներու
 գործունէութեան մէջ :

Ինչ քարտից մի երկու ամիս ա-
 ռաւ արտասահմանի հայ հրատարա-
 կախօսներին հրաւեր կարգաւոր քնն-
 քննելու և գտնելի մակդիրներ
 գործածելուց, որովհետեւ աւետարա-
 նը յաճախ կարգաւոր (նրա պատկեր-
 ները երբեք չը կատարելու որոշումով)
 ձեր նկարները նրա հետ ու սրբացել
 են և չեն գիտնում այդ գտնելի ա-
 ծականներին, բայց խնդրում ենք ա-
 սացէք, եթէ ձեզ վերագրված սակա-
 սութիւնները ճիշդ են. ինչ մակդիր
 պէտք է տալ ձեզ :

Եթէ ճիշդ են, իմ կարծիքով,
 մինչև օրս գործածված մակդիրներին
 ոչ մէկը կարող է ձեր էութիւնը որա-
 կել. Հարկաւոր է մի նոր մակդիր
 գտնել, աւելի որոշիչ մակդիր, ու
 այդ մակդիրը ընտրութեան իրաւուն-
 քը պէտք է տալ ձեր գծովը տանջ-
 ված ու զեւ տանջվող հայ որբերին,
 որովհետեւ նրանք ամենից լաւ են
 ճանաչում ձեր հոգին...

Եւրոպայի հայեր, մեզ վստահելի
 ազդիւններին հաւատացնում են որ
 պատուելի Թումայեանը մի արտա-
 կարգ անարտ շարժումն է. նրա
 սոս գունդած հայ որբերը իրենց գր-
 ժօքները մէջ են զգում և այդ մարդիկ
 ձիրաններում կաշկանդված անկարող
 են իրենց բողոքը հրատարակ հանել :
 Պէտք է այդ փոքրիկներին ազատելու
 մի հնար գտնել, պէտք է մի քննիչ

ուղարկել այդ որբի մէջ կատարվածնե-
 րը քննելու, իրականութիւնը պար-
 զելու :
 Իմ կարծիքով, Եւրոպայի հայ ու-
 սանողները Միութիւնը կարող կը
 լինի այդ քննութեան ձեռնարկել,
 ուղղակի մի մասնաւոր քննիչ ուղար-
 կել, որովհետեւ Թումայեանի մօտ
 գտնված որբերն էլ փոքրիկ ուսու-
 նողներ են : Մենք հաւատացած ենք
 նաեւ որ հասարակութիւնը իր նիւ-
 թական օժանդակութիւնը չի խնայել
 Միութեան գրված քննիչի ծախսերը
 հողալու համար :

ՎԱՐԳՈ

ՎԻԿՏՈՐ ՀԻԿՈՅԻ ԶԱՌԸ

(Արտաստիճան Ձերստիւն,
 ուր հրատարակւած էր ևս
 1860 թիւին 500 նշանաւոր
 ֆաղստիցիներն ստորագ-
 րողները կրող հրատար-
 անքով) :

Ես պատասխանում եմ ձեր հրաւե-
 րին : Ամեն տեղ, ուր ազատութեան
 համար ամբիոն են կանգնեցնում և
 ինձ կանչում են, ես գնում եմ, այդ
 իմ բնազդովն է. և քարտուղում եմ
 ճշմարտութիւնը, այդ իմ պարտա-
 կանքն է : (Լսեցէ՛ք, լսեցէ՛ք) :

Անա ճշմարտութիւնը, ոչ ոք այս-
 պիսի մի բողոքում իրաւունք չունի
 անտարբեր հանդիսատես լինել կա-
 տարեւոր մեծ դէպքերի, այսօր սկը-
 սում է ընդհանուր ազատութեան վեճ
 գրքի համար անհրաժեշտ է ամենքի
 ճիշդ ամենքի գործակցութիւնը,
 ամենքի օգնութիւնը. Ոչ ոքի ա-
 կանջը չը պէտք է խուլ մնայ, ոչ ո-
 քի սիրտը չը պէտք է լռի. երբ որ
 ճիշդ են արձակում բոլոր ազգերը,
 այդ ճիշդ պէտք է արձագանք գտնի
 բոլոր մարդկանց սրտերում : Ով որ
 միայն մի կողմից ունի, այդ կողմից
 պէտք է սոյ Գարիպալդիին, ով որ
 միայն մի քար ունի, այդ քարը
 պէտք է նետի նրա թշնամիներին գլ-
 խին...

Գարիպալդի, ինչ է Գարիպալդին,
 Մարք է, աւել ոչինչ : Բայց մարդ
 այդ բառի ամենալուսն շնանակու-
 թեամբ, Ազատութեան մարդ, մար-
 դասիրութեան մարդ :

Չօք ունի՞. Ո՛չ, Մի բուն կա-
 մաւորներ, Պատերազմական մթնոլ-
 նե՞ր, Ո՛չ, վառօդ, Հազիւ թէ մի
 քանի փոքրիկ տակաւ, թնդանոթ-
 նե՞ր, թշնամիներինը, Հապա ին

չունի է նրա սիր, ինչն է նրան
 յողովող հանդիսացնում. ինչ ունի
 նա հետը. — Ժողովրդի հոգին, նա
 առաջ է գնում. նա թողում է, նրա
 արշաւանքը հրեղէն զնայք է, նրա
 մի բուն վաշտը գորգնայք է Չար-
 դում, նրա թուղիքները թալիսման
 ունեն, նրա ստորձանակները կնդակ-
 ները գիտաբան են թնդանոթների
 սուտերին. ժամանակ առ ժամանակ
 ճակատամարտի խոսնափոխութեան
 մէջ, վառօդի ծխում, կրակի փայ-
 շտակելու ժամանակ նրա յետեւին
 աստուածուհի է երևում, կարծես
 նա Հոմերի հերոսերից լինի...

... Մենք բոլորս, ով էլ լի-
 նենք, ծափահարում ենք Իտալիա-
 լին...

Ինչ, որ ինձ լուսն էք, երեւա-
 կայում էք արդեօք այդ սքանչելի
 սեպարտը, ազատ Իտալիան, ազա-
 տագա Տարենտեան ծոցից մինչեւ
 սուրբ Մարկոսի լճերը, բրովհետեւ
 վենետիկն էլ կը մասնակցի այդ առ-
 նայումութեանը : Երեւակայում էք
 այդ երազը, որ վաղը իրականու-
 թիւն կը դառնայ : Վերջացաւ, յոշո
 ցնդեց ամեն բան, որ խաբութիւն
 էր ու կեղծիք, մոխիր էր ու խաւար
 Իտալիան գոյութիւն ունի, Իտալիան
 Իտալիա է, ինչ որ առաջ աշխարհա-
 կական անուն էր, այժմ ազգ է,
 ուր որ առաջ գիտի էր, այժմ հոգի է,
 ուրեւակայում էր այժմ հրեշտակապետ
 է, ազգերի մեծ հրեշտակապետ, կան
 գուն, թեւատարած Ազատութիւն,
 Իտալիան, մեծ սեւեռը, զարթնել է,
 տեսէք, նա վեր է կենում և ժողո-
 տում է ամբողջ մարդկութեանը...

Այո, յոստացէք ամեն տեղ, աշխար
 հիս բոլոր երկիրներում : Թող ուս
 մութիկը, երկրպագական ֆեւրալը,
 և բողոքական ազգայնականը, հնդ-
 կական պարթան, ծախուած նէգրը,
 ճնշուած սպիտակամորթը, թող բո-
 լորը յուսան, Եղիթաները մի ցանց են
 կողմում, միմեանց պահպանում են,
 մէկը որ փշուրի ցանցը կարճակուր
 Հոմերի պապը Սուլթանին աւելի մօտ
 ազգական է, քան ինքը կարծում է.
 նա նրա հարազատ եղբայրն է, Սա-
 կայն, կրկնում եմ, այդ վերջացել
 է, Մի տեսակ գերաբարդկային բան
 կայ մարդկանց ազատութեան մէջ :
 Ազատութիւնը հրաշալի անդունդ է,
 որ քաշում է դէպի ինքը, Յառաջա-
 դիմութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ
 ձգողական ոյժի արտադրանքն է :

(*) Ռուս գրեւորներին Ալեք-
 սանար Բ. կայսրը ազատեց ճորտու-
 թիւնից 1861 թուին :

Ով կարող է նրա ստացն առնել,
 Չարիք տրտելու պէս սկսում է
 անընկճելի շարժումն, կանգնեցրէք
 վայր ընկնող քարը, կանգնեցրէք
 հեղեղը, կանգնեցրէք ձառն հիւսը,
 կանգնեցրէք Իտալիան, կանգնեցրէք
 1789 թիւը, կանգնեցրէք երկրա-
 դու՛ար, որ Աստուած նետել է և-
 թերքի մէջ : (Ազգային ծափահարու-
 թիւններ) :

Թարգ. Տ. Յովհաննիսեան.
 Ժողովածու (1892թ)

ԿԱՌԱՅԻՍ ՍԻՍՈՒԱՐԻՆԵՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Անցեալ սեպտեմբերից կաթօ-
 լիկ Լազարիսա միսիօնարութիւնն
 Իտալիայում մի գարոց բաց արեց,
 ինչ նպատակի համար, Շատ
 պարզ է, որ կաթօլիկութիւնն
 Իտալիայի հայոց մէջ տարածելու,
 որովհետեւ գարոց բաց անողն
 կաթօլիկ միսիօնարութիւնն է :

Ինչ ինչ է նշանակում միսիօ-
 նար, ինչու մէկ կայանում միսիօ-
 նարութեան նպատակն այդ բո-
 լորս էլ գիտենք : Գիտենք, որ
 ներպայցի կցերը թողնելով իր
 երկիրը (կամ իբրեւ մի փրատա-
 կար տարր երկրից արտաքոյն-
 լով) և օտար երկրները գնալով
 (մանաւանդ իր զարգացումով
 կցերը, հայրենիքից աւելի ստոր
 աստիճանի վրա կանգնած երկիր-
 ներ) մի միակ նպատակի է ձգ-
 տում — հոգիներ որսալ : Խօսել
 այն մասին թէ միսիօնարութիւնն
 որքան սխալ և բացարձակ
 գործունէութիւն է ընտրում, քա-
 ռոզելով իրանից, դուրս աւելի
 ջերմ և ճշմարիտ հաւատացող
 քրիստոնէսայ ազգերի մէջ՝ աւե-
 լորդ է, այդ մասին շատ, շատ
 է գրվել. միայն այն կասենք,
 որ իր գործունէութիւնն այդպէս
 սահմանափակելով նա՛ մանաւանդ
 կաթօլիկ միսիօնարութեան հաս-
 նելու — դաւանափոխ գործելու
 համար, միջոցներէ մէջ ոչ մի
 խարստիւն չի գնում. Ի պատակն
 սրբաբացում է միջոցը — այդ-
 նրա գէլիկն է, Իսկ թէ այդ
 միջոցներն երբեմն մինչեւ որ սս-
 տիճան ստոր են լինում՝ դա էլ

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Ճիպտութիւնը զգայինները ի նպատակարարն արկածելոց 357 ֆրանք գրկած են պատրիարքարան :

— Մայր աթոռի ներքին գործոց նախարարին մատուցած վիճակագրէն կերելի թէ Ռուսիոյ և կովկասի հայոց թիւն 1,133,474 որոնք վեց թեմի մէջ ամփոփուած են և ունին 1,574 քահանայ 79 վանք, և 1,327 եկեղեցի : Ժողովուրդին միայն 217,133 հոգին քաղաքաբնակ իսկ մնացածը գիւղացիներ են :

— Ձէյթունի և Բագէշի մէջ կարող առաջնորդներու պէտքը կզգացուի :

— Սանասարեան վարժարանի տնօրէններէն պ. Աբուղեան ճամբայ ինկած է դէպի Պոլիս. վարժարանին խնամակալութիւնը նորէն ժողով պիտի ունենայ վարժարանը Խարբերդ տեղափոխելու խնդրի մասին :

— Կիմանանք թէ այս տարի եւս Բարիզի գեղալուստներու պալատին մէջ հայ արուեստագէտները ուշագրաւ բաժին մը գրաւած են, իրենց ուրոյն ուղւթութիւններուն և ձգտումներուն համեմատ շատ յաջող նկարներ ցուցադրելով :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Պոլսէն կը հայորդեն թէ՛ անցեալ երեքշաբթի 20 հոգիի շափերի տասարդ կաթոլիկ հոգևորականներ որ Չամլըճայ զրօսանքի ելած էին, թարք զինուորներու կողմէն ծանր վիրաւորանքներու կը ենթարկուին : Այդ դէպքի մասին իսկոյն տեղեկութիւն տրուեց ֆրանսական հիւպատոսին, և վերջինս խիստ դիմուկներ ըրեր է Բ. Իսան և քննութիւն պահանջուցէ :

— Լուրեր կը պատին որ եմէնի մէջ բաւական վտանգաւոր ապստամբութիւն ծագեր է : Մանրամասնութիւնները կը պակսին, բայց յայտնի է որ էպի շրջանի թուրք զօրքերուն հրահրատարը նոր զօրք ուղած է :

— Պատերազմական նախարարը հրամայած է որ այսուհետեւ սպանները արեւի մտնելէն վերջը չը պիտի գտնուին Բերայի փողոցներուն և հանրային հաստատութիւններուն մէջ : Յիս հրամանին չը հնազանդողները խստորէն պիտի պատժուին :

— Մարինիստ կաթոլիկ հոգե-

ւորակներու վրայ յարձակում գործող զինուորները կը յայտարարեն որ առաջինները հնազանդած չեն հերթապահ զինուորին որ պահանջած է ճամբանին փոխել : Քննութիւնը դեռ կը շարունակուի :

— Տիարօվայի մէջ երկու Ալպանացի կարեւոր պետեր իրարու հետ ընդհարում ունեցեր են : Երկու պետերուն կողմնակիցներուն միջեւ հրացանաձգութիւն եղեր է : Երկուսն զոյցուած է :

Պ Ո Ւ Լ Կ Ե Ր Ի Ա

Ազգային ժողովը բացուեցաւ Իշխանի գահական ճառով :

— Ապրիլ 23ին ամբողջ Պուլկարիոյ մէջ մեծ հանդէսներով տօնուեցաւ Պոլսոյ էքզարխին պաշտօնավարութեան 25ամեակը :

— Սօֆիայէն, ներքին գործոց նախարարին նախագահութեամբ կառավարութեան կողմէ պատուիրակութիւն մը գնաց Պոլիս էքզարխը շնորհատրելու :

Թ Ո Ւ Ս Ի Ա

Լեհական թերթ մը կը հայորդէ որ Կիւֆի նահանգի գիւղացիներու մէջ Չարի անունով կեղծ յայտարարութիւն մը բաժնուած է հետեւեալ պարունակութեամբ :

— Իմ պապս, Ալէքսանտր Բ. ձեզ ճորտութեան ազատեց և հոյը ձեզի բաժնեց, բայց կայսրութեան մեծերը և զօրաւորները դժգոհ Չարի ըրածէն, նորէն հոյը ձեր ձեռքէն առին և զոյցան ձեր սեփականութիւնները : Հոյը, որ դուք կը մշակէք չնչի՛ վարձաւարութեամբ ձերն է, ոչ անոնցը. ձեր ճնշողներուն ամբարներն մէջ գտնուած ցորենը նոյնպէս ձերն է : Ես ձեզ կը սիրեմ և արդար Չար մընեմ. ուրեմն հոյը ձեր մէջը բաժնեցէք. եւ եթէ ցորենը, կենդանիները, որոնք իրաւամբ ձեզ կը պատկանին, կամաւորապէս ձեզի չը վերադարձնեն, ուժով խլեցէք : Այս են Չարին հրամանները :

— Տանիմարքայի թերթի մը կը հայորդեն թէ Մոսկովայի և Վլադիմիրի նահանգի մէջ ժողովրդին դորձաւոր մասը ամբողջովին ամպստամբած վիճակի մէջ կը գտնուի. մեծ ընդհարումներ տեղի ունեցեր են, կան բազմաթիւ վիրաւորեալներ և սպաննուածներ :

Ուլաններու գունար, որուն պետն է գնդապետ Մարգոֆ, մերժած է գործաւորներու դէմ կռուի երթալ :

— Կսուի թէ Սպիտքիին սպանողը արգէն հրացանի բռնուած է :

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Հասէէն կը հայորդեն որ անգլիական պատիրակ Վոլմարանս տեսակցութիւն ունեցեր է Քրիկէրին հետ :

Անգլիական թերթերու մասնաւոր թղթակցներու հայորդածներու համեմատ Բէդօրիայի մէջ կը կարծուի որ խաղաղութեան բանակցութիւնները այնչափ ալ յաջող չեն ընթանար :

Լուստեսները ընդհակառակը կը կարծեն որ ուղած չուղած պօէրները կամայ կամայ պիտի ընդունին այն պայմանները, զորս զօրավար Պոթա 1901ի մարտին մերժեց :

L'EUROPEEN

— 0 —

Շտաբթաթերթ քաղաքական, միջազգային իրաւունքի, բնկերական հարցերու, գրական և գեղարուեստական :

Տարեկան 15 ֆր.
Վեցամսեայ 8 ֆր.

Հասցէ 24 rue Dauphine Paris VI

ԵՐԹԵՐԻ ԵՐԹԵՐ

— 0 —

Ֆիլիպպի Հայկ. Երգեցիկ խումբը պատրաստ ունի հետեւեալ քառամսյն երգերը :

«Մեր Հայրենիք», «Մայր Արագսի» և «Զինգիլիին ֆաթէն կիտամ», «Լոսեց ամպերը», (Կարա Մուրզա), «Իմարտ—բաւ է որքան», «Վրէժ—թող կորչին» մէկական երես 15 սանթիմ :

«Արիք Հայկազունք», «Ես լրսեցի մի անուշ ձայն», և «Օյնազան»—ժողովրդական պարերգ—(Կարա Մուրզա) երկու քական երես 30 սանթիմ :

«Ռազմերգ—Հայ եղբայրները» 3 երես 45 սանթիմ :

«Գնացէք տեսէք ո՛վ է կերել զէճ» և «Լեփօ լէ լէ»—ժողովրդական պարերգ—(Կարա Մուրզա) «Կախալան—բերին աթոռ Ելաւ» 4ական երես 60ական սանթիմ :

Արտասահմանի համար մէկ երեսը 20 սանթիմ :

Ֆիլիպպի Հայկ. Երգ.—puss. հոսեր

Հասցէ
Յակոբ Սրվաճեան
(Ֆիլիպպի)

ԿՕՇԻԿԻ ՎԱՃԱՌԱՍՏՈՒՆ

— 0 —

Հայրապետ Մարգարեան «Բրէսլաւսկա» մեծ պոփօսային վրայ :

Ամենաբնախորհրդանք պատրաստի եւ մասնաւոր պատէրով կօշիկներ. գները չափաւոր. Վստահ ենք թէ յաճախորդները գոհ պիտի մնան ամեն կերպ.
Վառնա

ԽՄԱՌԳՐՈՒԹԻՒՆ «ՆԱՐԺՈՒՄ»
Կը ապագրուին ամէն լեզուէ ալցեալուս, հասցէտուն, նամակագրութիւն, հարստեական հրաւիր, մահազդ :
Գիները յոյժ գիւրամատչելի :
Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրութեամբ և փութով կը կատարուին :
ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԻՍԻԿ

Գ Ո Ւ Թ Ա Ն

— 0 —

Հանդես տեսնայ, հոյազորական, գիտական և արուեստագիտական
Հիմնադիր անօրէն
Գարեգին Բ. Մեծաւորեան
Հրատարակուած է Բ. րգ թիւը,
չանկան բովանդակութեամբ :
Տարեկան բաժնեգինն 12 ֆր. գիւնի հիմնարկին, 23 rue de la Odeon

Դրանը կանխիկ

ՍԻՄՕՆ ՆԱԶԱՊԵՏ և Ընկ.
Ս. Ժիով. Կրիստոսոօ 5715

(Իտալիա) Վէնէտիկ

Դրանք.—Կը փութաւք յայտնելու ազնիւ ազգայնոց որ իմօտոյ պիտի հրատարակենք նաև սեծագիր լուսատիպ, աստիակարգ և ամենակատարական պատկեր մը, որ կը ներկայացնէ հոչակաւոր ազգայնագործիչներու ժողով մը :
Նոյն պատկերին լուսատիպ քարտերն ևս կը պատրաստենք :

— 0 —

Եւրոպայի Հայ. Ուս Միութեան նամակ ուղարկելու եւ առհասարակ ամէն տեսակ դիմում ընելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցէով
Իւնիոն Տէ Զեդիսիան Արմ.
Լեօնոք Վիլ Տր Լեփօլ Տր Շիփի 2
Սուխա Ժընէվ
Կարգողիւ Յանձնաժողով

Отговорникъ

Мурадъ-Ераносянъ

Печ. Взаимность — Варна